

Հաստատված է

Հայաստանի Հանրապետություն
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2020թ. նոյեմբերի 30-ի N 11 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ



2021թ.

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԷՋԸ
I.	Ծրագրի նպատակը	3
II.	Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները	4
III.	Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը	4
IV.	Հայտնաբերված առավել ռիսկային ուղղությունները և առկա հիմնախնդիրների բացահայտումը	5
V.	Ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը	10
VI.	Տեսչական մարմնի 2021 թվականի միջոցառումների ժամանակացույց	15
VII.	Տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագիրը	23

1. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակներն են՝ բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

Տեսչական մարմինը վարում է տվյալների բազա, որը ներառում է տեղեկատվություն իր վերահսկման ոլորտում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով վերջիններիս տրված գնահատականները: Տվյալների բազայի ձևավորման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է, պետական և տեղական կառավարման մարմիններից ստացված տեղեկատվությունների հիման վրա, ստուգման ընթացքում ձեռք բերված և պետական մարմինների միջև տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից իրենց տվյալների փոփոխման արդյունքում տվյալների բազաներում առկա համապատասխան տեղեկատվությունից:

Տեսչական մարմինը սույն Ծրագիրը կազմելիս թիրախավորել է տնտեսական գործունեության հետևյալ ոլորտները՝

- ✓ մետաղական հանքավայրերի շահագործում
- ✓ անտառային տնտեսություններ և հատուկ պահպանվող տարածքներ
- ✓ ոչ մետաղական հանքավայրերի և հանքային ջրերի շահագործում
- ✓ մետաղական և քիմիական արտադրատեսակների արտադրություն
- ✓ էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում
- ✓ ձկնաբուծություն
- ✓ ջրամատակարարում
- ✓ թափոնների տեղադրում և ոչնչացում
- ✓ այլ արտադրական գործունեություն

Տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրի նպատակը բնապահպանության և ընդերքի ոլորտներում վերահսկողության իրականացումն է, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը և արդյունավետ գործիքակազմ ունենալը:

2. Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները

Առավել ռիսկային ոլորտները և տնտեսավարող սուբյեկտները բացահայտելու, ինչպես նաև Ծրագրի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Տեսչական մարմինը տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից:

Մասնավորապես՝

- ✓ Պետական եկամուտների կոմիտե,
- ✓ Շրջակա միջավայրի նախարարություն,
- ✓ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջ,
- ✓ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայք,
- ✓ Տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացրած հաշվետվությունների կողմից ներկայացված տարեկան վարչական-վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն,
- ✓ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,
- ✓ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքէջ,
- ✓ Կադաստրի կոմիտե,
- ✓ Տեսչական մարմին և նրա «Թեժ գիծ» հեռախոսահամարին ստացված դիմում-բողոքների և ահազանգերի վիճակագրություն,
- ✓ Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ շփումներ,
- ✓ Համացանցում իրականացվող ուսումնասիրություններ:

3. Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության արդյունքների վերլուծությունները՝ պայմանավորված առավել ռիսկային ուղղությունների բացահայտմամբ՝ այն ուղղությունների, որոնցում ավելի հաճախ են կատարվել իրավախախտումներ:

Տեսչական մարմնի ղեկավարի կողմից 2020 թվականի ընթացքում տրվել է թվով 147 ստուգում իրականացնելու մասին հանձնարարագիր, որից 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրով՝ 51, Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարականներով՝ 13, Հայաստանի Հանրապետության պետական այլ մարմիններից ստացված գրություններ՝ 60, դիմում-բողոքների հիմքով՝ 18 և տրված պարտադիր կատարման հանձնարարականների վերաբերյալ ստուգման հիմքով՝ 5:

Իրականացված ստուգումների արդյունքում Տեսչական մարմնի կողմից վեր են հանվել տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները, որն ունի հետևյալ պատկերը.

«« օրենսդրություն	«« օրենսդրական իրավախախտումներ /քանակ/	Իրավախախտումները տոկոսային արտահայտմամբ (%)
«« ընդերքի մասին օրենսգիրք	26	14.2
«« ջրային օրենսգիրք	44	24.0
«« հողային օրենսգիրք	17	9.3
«« հարկային օրենսգիրք	32	17.5
Թափոնների մասին «« օրենք	22	12.0
Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք	21	11.5
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին «« օրենք	7	3.8
Պաշտոնական վիճակագրության մասին «« օրենք	3	1.6
Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին «« օրենք	1	0.5
Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին «« օրենք	1	0.5
Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին «« օրենք	2	1.1
Լիցենզավորման մասին «« օրենք	4	2.2
Անտառային օրենսգիրք	2	1.1
Բնապահպանական վերահսկողության մասին «« օրենք	1	0.5
Ընդամենը	183	100.0

4. Առավել ոխկային ուղղությունները և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Բուսական աշխարհի օգտագործման և պահպանության վերահսկողության ուղղություն

Համատարած անտառահատման ենթարկված տարածքներում էկոլոգիական վիճակի բացասական փոփոխությունները երկարաժամկետ բնույթ են կրում: Սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների և փայտանյութի բարձր պահանջարկի հետևանքով անտառահատումները դեռևս գերազանցում են անտառի բնական վերականգնման ծավալները: Դրան նպաստում են փայտանյութի մատչելիությունը, էներգակիրների գների բարձրացումը, բնակչության սոցիալապես անապահով խավերի ցածր վճարունակությունը

և իհարկե ոչ բավարար հսկողությունը: Անտառահատումների արդյունքում ինտենսիվ բնույթ են կրում անտառի կազմի անցանկալի փոփոխությունները՝ անտառի նոսրացում, տնտեսապես բարձրարժեք կաղնույն և հաճարենույն փոխարինում է ցածրարժեք բոխին, անտառի ստորին գոտու տեսակների (այդ թվում՝ Կարմիր գրքում գրանցված) անհետացմանը: Վերջին տարիներին անտառային զանգվածների հատված տեղամասերում և դրանց հարող տարածքներում նկատվում է հողմատապալ կամ ձնետապալ տարածքների ընդարձակում, հողատարման, ձորակառաջացման, սողանքների, էրոզիոն-սելավային պրոցեսների ակտիվացում, աղբյուրների չորացում, փոշու ամպերի գոյացում և այլ երևույթներ, որոնք մեծ վնաս են հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին: Որպես անտառային էկոհամակարգերի որակական հատկանիշների փոփոխման հետևանք կարող են դիտվել վնասատուների զանգվածային համաճարակները: Ավելացել են անտառային հրդեհների ծավալները, որոնց դեմ պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացմանը խոչընդոտում են բարդ ռելիեֆը, անտառային ճանապարհային ցանցի անմխիթար վիճակը, հրդեհների մարման տեխնիկական սարքավորումների բացակայությունը և այլն:

Առկա հիմնախնդիրների լուծման համար նպատակահարմար է հատատեղերի շահագործումը, թափուկի դուրսբերումը կատարվի անտառտնտեսության կողմից և ցանկացած տիպի փայտանյութի տրամադրումն իրականացվի միայն պահեստից, ինչպես նաև վաճառված և տեղափոխվող փայտանյութի վերահսկողությունն իրականացվի նաև առցանց:

Վերոգրյալ ուղղությունում առկա իրավիճակը բարելավելու նպատակով տեսչական մարմինը 2021 թվականին հանդես կգա Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում, «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկով:

Ընդերքօգտագործման և պահպանության ուղղություն

«Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2020 թվականի օգոստոսի 16-ին ընդունել է օրենք, ինչպես նաև 2020 թվականի հոկտեմբերի 17-ի ընդունված օրենքով լրացումներ և փոփոխություններ է կատարել «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որոնք գործնականում կիրառվելու են 2021 թվականին:

Երկու օրենքների դրույթների գործածության վերաբերյալ Տեսչական մարմնի նպատակի և խնդիրների իրականացման նպատակահարմարությունից ելնելով 2021 թվականին կկազմակերպի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումներ:

Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ուղղություն

Հիմնական ռիսկերը ի հայտ են եկել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնելու պահից, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1291-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետությունում գործող տնտեսավարող սուբյեկտները բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկները եռամսյակային կտրվածքով ներկայացնում են Պետական եկամուտների կոմիտե՝ միասնական հարկային հաշվարկի էլեկտրոնային համակարգով: Նույն որոշման հավելվածի 5-րդ կետով՝ «Վճարողը լրացնում է միասնական հարկային հաշվարկի հավելվածը (արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար, ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները տեղադրելու և (կամ) պահելու համար բնապահպանական հարկի և (կամ) բնօգտագործման վճարի), որը պետք է ներկայացնի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ հաստատման»: Վերջինս չի իրականացվում, քանի որ Տեսչական մարմինը՝ որպես լիազոր մարմին, անմիջական հասանելիություն չունի միասնական հարկային հաշվարկի էլեկտրոնային համակարգին: Արդյունքում 2020 թվականին արձանագրվել է Հայաստանի Հանրապետությունում գործող տնտեսավարող սուբյեկտների բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկների չներկայացման դեպքերի աճ, ինչպես նաև Տեսչական մարմինը չունի հնարավորություն լիարժեք իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ հաշվետվությունների թերի կամ աղավաղումներով ներկայացման առնչությամբ: Վերոգրյալ հաշվարկների վերաբերյալ տեղեկատվությունը Պետական եկամուտների կոմիտեի կողմից Տեսչական մարմնին տրամադրվում է էլեկտրոնային փոստով՝ համակարգից Excel ձևաչափով ներբեռնած տարբերակով, ինչը առաջացնում է մի շարք խոչընդոտներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված և Տեսչական մարմնին վերապահված գործառույթների լիարժեք, օպերատիվ և արդյունավետ իրականացման առնչությամբ:

Վերոգրյալ խնդիրը լուծելու նպատակով՝ անհրաժեշտ է համապատասխան ծրագրային գործիքներով էլեկտրոնային համակարգի ստեղծում և Տեսչական մարմնում ներդրում, որի կատարումը նախատեսված է տարեկան միջոցառումների ժամանակացույցով:

Մթնոլորտային օդի պահպանության ուղղություն

Առավել բարձր ռիսկային են համարվում ցեմենտի, գաջի արտադրությամբ, հանքարդյունաբերությամբ, գունավոր մետաղների վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունները: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների բարձր կոնցենտրացիաների պատճառը պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտներին տրված

թույլտվության չափաքանակների արտանետումների գերազանցմամբ՝ հատկապես անօրգանական փոշու, ծծմբային անհիդրիդի, ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդների, ծանր մետաղների, ցիանաջրածնի և այլ վնասակար նյութերի արտանետումներով: Հիմնականում խնդիրները պայմանավորված են սահմանային թույլատրելի արտանետումների նախագծով նախատեսված արտադրողականության ծավալների գերազանցման պատճառով, որոշ տնտեսվարողներ աշխատում են առանց հեռացող գազերի մաքրման համակարգի՝ հատկապես գունավոր մետաղների վերամշակմամբ զբաղվողները չեն ապահովում մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մաքրման համար բնապահպան կառույցների և սարքավորումների սարքինությունը, անընդմեջ և արդյունավետ աշխատանքը: Առանց մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների սահմանված նորմատիվների գործունեություն իրականացնելը բերում է մթնոլորտային օդում վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունների բարձրացմանը, մթնոլորտային օդի աղտոտվածությանը:

Խնդիրների վերացման կամ մեղմելուն պատակով 2020 թվականի ընթացքում մթնոլորտային օդի պահպանության ոլորտում նախատեսվում է իրականացնել ստուգումներ, մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացում ժամանակակից սարքավորումներով՝ ընկերությունների կողմից տրված բնապահպանական հաշվարկ-հաշվետվություններում ներկայացված փաստացի ծավալների համապատասխանելիությունը սահմանված նորմատիվներին պարզելու նպատակով: Արտանետումները նվազեցնելու նպատակով տնտեսվարող սուբյեկտներին տալ հանձնարարականներ՝ պարտադիր միջոցառումներ իրականացնել արտանետման թույլտվություններում նախատեսված պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ, ապահովել մաքրող սարքավորումների անխափան աշխատանքը:

Ավտոտրանսպորտային միջոցները շահագործվում են առանց վնասակար նյութերի արտանետումների սահմանված նորմատիվների կարգավորման: Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման կետերում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացվում:

Նախատեսվում է առաջարկել օրենսդրական փոփոխություններ Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման համար լիարժեք վերահսկողություն իրականացնելու նպատակով:

Ամբողջովին չի իրականացվում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի չափագրական աշխատանքներ: Անալիտիկ լաբորատոր և չափագրական հետազոտությունների ոչ լիարժեք իրականացումը հանգեցնում է ռիսկերի բարձրացմանը:

Վերոգրյալ ուղղությունում առկա իրավիճակը բարելավելու նպատակով տեսչական մարմինը 2021 թվականին հանդես կգա «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, «Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը հաստատելու մասին» 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2410 Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումում լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկով:

Ջրերի օգտագործման և պահպանության ուղղություն

Առավել բարձր ռիսկային են համարվում Արարատյան դաշտի արտեզյան ջրավազանից և Հայաստանի Հանրապետության տարածքում ձկնատնտեսական նշանակության մակերևույթային ջրային ռեսուրսներից ջրառ իրականացնող, ինչպես նաև արտադրական կեղտաջրերը դեպի մակերևույթային ջրեր հեռացնողները:

Արարատյան դաշտում բարձր ռիսկային են համարվում ձկնաբուծության, ոռոգման և խմելու, կոմունալ-կենցաղային նպատակներով ստորգետնյա ջրատար հորիզոնից ջրառ իրականացնողները: Այս պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել ջրօգտագործման հաշվառման (ջրաչափերի տեղադրման) և ստացած ջրօգտագործման թույլտվության բոլոր պայմանների կատարման պահանջները:

Կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում մակերևույթային ջրային ռեսուրսներից ջրառ իրականացնողների կողմից, հատկապես ՓՀԷԿ-երի շահագործման դեպքում գետերի էկոլոգիական թողքերի պահպանման և ձկնապաշտպան կառույցների ու սարքավորումների առկայության խնդիրները:

Բարձր ռիսկային ջրօգտագործողներ են համարվում նաև Սևանա լիճ և լճի ջրահավաք ավազան կեղտաջրեր հեռացնող տնտեսավարողները, ԶՕԸ-երը և փոքր հիդրոէլեկտրակայաններ շահագործող կազմակերպությունները:

Վերոգրյալ ուղղությունում առկա իրավիճակը բարելավելու նպատակով տեսչական մարմինը 2021 թվականին հանդես կգա Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու առաջարկով:

Հողերի օգտագործման և պահպանության ուղղություն

Առավել բարձր ռիսկերը պայմանավորված են՝

- ✓ հողի վերին՝ բերրի շերտի ապօրենի տեղափոխմամբ,
- ✓ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի օգտագործման կարգը խախտելով,

2020 թվականի ընթացքում ստուգումներ է իրականացվել արտադրական, ճանապահաշինարարական, ընդերքշահագործող և այլ ձեռնարկություններում: Ստուգման ընթացքում արձանագրվել են հողերի ոչ ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործման դեպքեր:

Վերոգրյալ ուղղությունում առկա իրավիճակը բարելավելու նպատակով տեսչական մարմինը 2021 թվականին նախատեսել է ավելացնել ստուգումների քանակը:

Վտանգավոր նյութերի և թափոնների գործածության ուղղություն

Հիմնական ռիսկերը պայմանավորված են՝

- ✓ արտադրական և սպառման թափոնները չթուլատրված տեղերում տեղադրմամբ,
- ✓ սահմանված կարգին համապատասխան վտանգավոր թափոնների անձնագրերի բացակայությամբ,
- ✓ թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի բացակայությամբ,
- ✓ թափոնների գույքագրումը, սկզբնական և ընդհանուր հաշվառման գրքերի վարման բացակայությամբ,
- ✓ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիաների բացակայությամբ:

Վերոգրյալ ուղղությունում առկա իրավիճակը բարելավելու նպատակով տեսչական մարմինը 2021 թվականին «ՊԱՀՊԱՆԻՐ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ» ծրագրի շրջանակներում կիրականացնի կանխարգելիչ միջոցառումներ:

5. Ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը

2020 թվականին ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված էր վերահսկման ենթակա 8 (ՏԳՏԴ) ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտ՝ թվով 90 հատ, իսկ 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված է վերահսկման ենթակա 14 (ՏԳՏԴ) ոլորտում (2020թ.-ի նկատմամբ վերահսկման ոլորտի 43% աճ), գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտ՝ թվով 100 հատ (2020թ.-ի նկատմամբ 10% աճ):

Տեսչական մարմնի կողմից 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների թվաքանակն՝ ըստ եռամսյակների հետևյալն է.

- 1-ին եռամսյակ- 21 ստուգում
- 2-րդ եռամսյակ- 31 ստուգում
- 3-րդ եռամսյակ- 30 ստուգում
- 4-րդ եռամսյակ- 18 ստուգում

Ստուգումների տարեկան ծրագրում թվով 100 տնտեսավարող սուբյեկտներից 70-ն ունեն բարձր ռիսկայնություն, միջին ռիսկայնությամբ՝ 25 և ցածր ռիսկայնությամբ՝ 5, որոնք համաչափ բաժանված են ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի և ըստ տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա թողած առավել ռիսկային չափանիշների հավանական բացասական ազդեցության:

Տեսչական մարմնի բազայում հաշվառված է թվով 4048 տնտեսավարող սուբյեկտ, որոնք համարվում են բնապահպանական և բնօգտագործման վճար վճարողներ:

Ծրագիրը կազմվել է Տեսչական մարմնի կողմից ճշտված թվով 2830 տնտեսավարող սուբյեկտների ցանկից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. օգոստոսի 22-ի թիվ 1125-Ն որոշմամբ հաստատված ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության:

Տեսչական մարմինը օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովելու նպատակով ընթացիկ փարում նախաձեռնել է մի շարք միջոցառումներ, որոնց իրագործումը հնարավորություն կընձեռի ռիսկերի կառավարման և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման առավել արդյունավետ գործիքակազմի ներդրման համար:

✓ Տեսչական մարմինը 2021 թվականի ընթացքում օրենսդրական բարելավումների առաջարկություններ կներկայացնի թույլտվությունների, լիցենզիաների, կնքվող պայմանագրերի պայմանների արդիականացման վերաբերյալ: Փոփոխություններով անհրաժեշտ է ուժեղացնել հսկողությունը ապօրինի ծառահատումների նկատմամբ, անտառամերձ համայնքներում տեղադրել հսկիչ կետեր և իրականացնել շուրջօրյա հսկողություն կենսապաշարները պահպանելու ուղղությամբ: Մինչ ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանման վերահսկողական գործառնությունների իրականացումը, լիազոր մարմինների կողմից անհրաժեշտ է փոփոխել պարտադիր կատարման պայմանները՝ հաշվառման սարքերի տեղադրման, մշտադիտարկման տվյալների ներկայացման ժամկետների վերաբերյալ, որոնց կատարման դեպքում նոր միայն ուժի մեջ կմտնեն թույլտվությունները, լիցենզիաները, կնքվող պայմանագրերը:

✓ Տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է վերահսկողական գործառնություններ, որոնց իրագործման առնչությամբ առկա են խնդիրներ՝ կապված աշխատանքների կատարման օպերատիվության, որակի ապահովման, թափանցիկության, արժանահավատության և հաշվետվողականության հետ, իսկ դրանց նվազեցման համար անհրաժեշտ է առավելագույնս պարզեցման, հստակեցման և հասանելիության սկզբունքով ներդնել էլեկտրոնային վերահսկողության համակարգ՝ համապատասխան էլեկտրոնային ծրագրի և սարքավորումների (պլանշետների) ապահովմամբ: Էլեկտրոնային վերահսկողության համակարգի ներդրումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությանում ձևավորել բնապահպանական վերահսկողության իրականացման քաղաքակիրթ նոր մշակույթ և մոտեցում, ինչն էլ կնպաստի վերահսկողության թափանցիկության, արժանահավատության և մատչելիության մակարդակի, տեսուչ-տնտեսավարող փոխհարաբերությունների էական բարելավմանը, բնապահպանական վերահսկողական համակարգի էլեկտրոնային բազայի ձևավորմանը, հանրային ռեսուրսների (մարդկային, նյութական և ֆինանսական) արդյունավետ կառավարմանը և այլն:

Էլեկտրոնային վերահսկողության համակարգի ստեղծման, ներդրման, էլեկտրոնային քարտեզների և այլ անհրաժեշտ տեղեկատվությունների առնչությամբ Տեսչական մարմինը համագործակցության առաջարկություն է ձեռք բերել, ինչպես պետական գերատեսչությունների, այնպես էլ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF) և Կովկասյան Բնության Հիմնադրամի (CNF) ներկայացուցիչների հետ:

✓ Տեսչական մարմնի բնականոն աշխատանքները կազմակերպելու նպատակով 2021 թվականին առաջարկվում է իրականացնել հաստիքների թվաքանակի և հաստիքացուցակի վերանայում, մասնավորապես.

- 1) Օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում՝ բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ,
- 2) 24 ժամյա հերթափոխային աշխատանքի կազմակերպում,
- 3) Բնապահպանական պետական տեսուչների թափուր հաստիքների համալրում:

Հաստիքների թվաքանակի և հաստիքացուցակի վերանայումը անմիջականորեն կանդրառանա Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողական գործառույթների արդյունավետության բարելավմանը:

✓ Տեսչական մարմինը, նպատակ ունենալով վերահսկողական աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու և փաստացի ջրային ռեսուրսների օգտագործումն արձանագրելու նպատակով ձեռք է բերել փակ ճնշումային խողովակաշարում ջրայեքերի չափման համար ուլտրաձայնային հոսքաչափ՝ «Взлет» ապրանքանիշի սարքավորումը:

Այս սարքի միջոցով Տեսչական մարմինը 2021 թվականի հնարավորություն կստանա ջրային ռեսուրսների օգտագործմանը վերաբերվող ստուգման տևողությունը նվազեցնել 5-10%-ով, ինչպես նաև դիմում-բողոքներին հիման վրա իրականացված չափման արդյունքները ավելի սեղմ ժամկետներում տրամադրելու համար:

✓ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020-2022 թվականների «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկոս» համակարգով» ծրագրի շրջանակներում Սևանա լճի և ջրհավաք ավազանի բնապահպանական մոնիտորինգ իրականացնելու աշխատանքների կազմակերպման մասին» որոշման նախագիծը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ: Ծրագրի իրականացումը հնարավորություն կստեղծի Տեսչական մարմնի համապատասխան մասնագետներին ծանոթանալ ոլորտի միջազգային լավագույն փորձին, ուսումնասիրել և գնահատել Սևանա լճի և ջրհավաք ավազանի խնդիրները և նպաստել տեսչական մարմնի ընդհանուր կարողությունների զարգացմանը:

✓ Հայաստանի Հանրապետության բնապահպանական մարտահրավերները հաշվի առնելով մշակվել է «ՊԱՀՊԱՆԻՐ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ» ծրագիրը, որի նպատակն է Հայաստանի Հանրապետության բոլոր վարչական տարածքներում (անտառներ, գետեր, լճեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ և հարակից արահետներ և ճանապարհային գոտիներ) տեղադրել գրաֆիկական և տեղեկատվական պատկերներով նախագրուշացնող և ուսուցանող ցուցանակներ (GPS հետևելու սարքերի վերահսկմամբ), որոնք Հայաստանի Հանրապետության բնակչությանը և զբոսաշրջիկներին կիրառել են տվյալ տարածքի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բնապահպանական կանոնների և պահանջների մասին: Այս ծրագրի ներդրմամբ

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

հնարավոր կլինի կանխարգելել և նվազեցնել անտառների ապօրինի հատումները, տարբեր մեթոդներով ու միջոցներով ձկնագողությունը և որսագողությունը, շրջակա միջավայրի աղտոտումն ու աղբոտումը և արդյունքում՝ էկոհամակարգերի խախտումը:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ



Նախատեսվում է իրականացնել լայնածավալ կանխարգելիչ իրազեկման աշխատանքներ, մասնավորապես՝ սոցիալ-բնապահպանական գովազդներ, հեռուստահաղորդումներ, զանգվածային միջոցառումներ, տեսահոլովակներ՝ Հայաստանի Հանրապետության աստղերի մասնակցությամբ, տեղեկատվական բուկլետների տպագրություն, ինչպես նաև մշակել էկոկրթական ծրագրեր, խաղեր և այլն:

Տեսչական մարմնի կողմից նախատեսված 2021 թվականին իրականացվելիք միջոցառումները՝ ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված են հավելված 1-ով:

Տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրում ներկայացված միջոցառումները՝ մասնավորապես.

- 1) օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում՝ բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ,
- 2) 24 ժամյա հերթափոխային աշխատանքի կազմակերպում,
- 3) բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկները եռամսյակային կտրվածքով ներկայացնելու վերաբերյալ՝ էլեկտրոնային համակարգի սեղծում:

Վերը նշված երկու ծրագրերի իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետությանում բնապահպանական իրավիճակի որոշակի դրական փոփոխությունների արձանագրմանը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու վարքում բնապահպանական գրագիտության և կարգապահության բարձրացմանն ու պահպանմանը:

Օրենսդրական բարեփոխումների նոր գործիքների ներդրմամբ պայմանավորված Տեսչական մարմինը նախատեսում է բնապահպանական վերահսկողության գործիքակազմի (վերահսկողական միջոցառումների քանակի) 10% ավելացում, որը համապատասխանաբար կբերի իրավախախտումների բացարձակ թվի 10-20% աճի: Վերահսկողական նոր գործիքակազմի ներդրմամբ 2021 թվականին, ինչպես նաև հետագա տարիների ընթացքում նախատեսվում է իրավախախտումների հարաբերական թվի (վերահսկողական միջոցառումների քանակի հետ համեմատ) 2-5% նվազում, որի միտումը կպահպանվի նաև հետագա տարիների ընթացքում:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը/գնահատման չափանիշը	Կատարողը	Համակատարը	Ժամկետը
1	2	3	4	5	6
1	<p>Մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների գործածության, սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ոլորտային ուղղություններում ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ</p>	թվով 21 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	Ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ և տարածքային ստորաբաժանումներ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն, ՌԻՍԿի գնահատման և վերլուծությունների վարչություն	I եռամսյակ
		թվով 31 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			II եռամսյակ
		թվով 30 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			III եռամսյակ
		թվով 18 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			IV եռամսյակ

	վերահսկողության իրականացում:				
2	Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական և կանխարգելիչ գործողությունների արդյունքներով «Հայտնաբերված վարչական իրավախախտումների, վարչական պատասխանատվության ենթարկված անձանց թվաքանակի և նշանակված տուգանքների չափերի մասին» Ձև 1-վի (տարեկան) վիճակագրական հաշվետվության կազմում և ռիսկային ուղղությունների թիրախավորում, ներկայացում ՀՀ Վիճակագրական կոմիտե:	Տեսչական մարմնի գործունեության սկզբունքների ապահովում՝ համաձայն Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի: Արդյունքը՝ հաշվետվություն:	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ և տարածքային ստորաբաժանումներ	01.03.2021թ.
3	Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի երկրորդ կիսամյակի և 2021 թվականի առաջին կիսամյակի	Տեսչական մարմնի գործունեության սկզբունքների ապահովում՝ համաձայն Տեսչական մարմինների մասին	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ և	20.01.2021թ. և 20.07.2021թ.

	<p>ընթացքում իրականացված վերահսկողական և կանխարգելիչ գործողությունների արդյունքներով «Ամփոփ հաշվետվություն Բնապահպանության և բնական պաշարների արդյունավետ օգտագործման պետական վերահսկողության մասին» Ձև թիվ 1- բնապահպանություն պետական վիճակագրական հաշվետվության կազմում, ռիսկային ուղղությունների թիրախավորում և ներկայացում ՀՀ Վիճակագրական կոմիտե:</p>	<p>ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի: Արդյունքը՝ հաշվետվություն:</p>		<p>տարածքային ստորաբաժանումներ</p>	
4	<p>ՀՀ-ում գործող տնտեսավարող կազմակերպությունների կողմից 2020 թվականի ընթացքում ներկայացված բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկների ամփոփում և ներկայացում ՀՀ Վիճակագրական կոմիտե:</p>	<p>Տեսչական մարմնի գործունեության սկզբունքների ապահովում՝ համաձայն Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի: Արդյունքը՝ հաշվետվություն:</p>	<p>Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն</p>	<p>Ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ և տարածքային ստորաբաժանումներ</p>	<p>01.06.2021թ.</p>

5	<p>Տեսչական մարմնի կողմից նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվության կազմում, հրապարակում և ռիսկային ուղղությունների թիրախավորում:</p>	<p>Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքների ամփոփում, համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի թիվ 607-Ն որոշման: Արդյունքը՝ նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների վերաբերյալ հաշվետվություն:</p>	<p>Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն</p>	<p>Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ</p>	<p>20.01.2021թ.</p>
6	<p>Տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների տարեկան ծրագրի կազմում և հրապարակում:</p>	<p>Տեսչական մարմնի կողմից տնտեսավարող կազմակերպությունների ռիսկայնության գնահատում և դրանց վերահսկողության հաճախականության բաշխում՝ ըստ տվյալ սուբյեկտների ռիսկայնության աստիճանի՝ համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1125-Ն որոշման: Արդյունքը՝ ստուգումների տարեկան ծրագիր:</p>	<p>Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն</p>	<p>Ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ և տարածքային ստորաբաժանումներ</p>	<p>01.12.2021թ.</p>
7	<p>Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ բնապահպանության ոլորտում նորարարությունների նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ:</p>	<p>Վերահսկողության արդյունավետության բարձրացում, այդ թվում անձնակազմի կարողությունների զարգացում, տեխնիկական միջոցների վերազինում:</p>	<p>Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն</p>	<p>Հիմնական կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ</p>	<p>Տարվա ընթացքում</p>

8	Իրականացնել Տեսչական մարմնի հաստիքների թվաքանակի և հաստիքացուցակի վերանայում	Վերահսկողության արդյունավետության բարձրացում և կանխարգելիչ աշխատանքների բարելավում:	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	2021 թվականի 2-րդ եռամսյակ
9	Տեսչական մարմնի էլեկտրոնային վերահսկողության համակարգի ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական առաջադրանքի մշակում:	Վերահսկողության արդյունավետության բարձրացում և ռիսկերի կառավարման գործընթացի բարելավում:	Խորհրդական՝ ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ և տարածքային ստորաբաժանումներ	20.12.2021
10	Տեսչական մարմնի էլեկտրոնային վերահսկողության համակարգի ստեղծում՝ համապատասխան էլեկտրոնային ծրագրի և սարքավորումների (պլանշետների) ապահովմամբ:	Վերահսկողության արդյունավետության բարձրացում և ռիսկերի կառավարման գործընթացի բարելավում:	Խորհրդական՝ ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Տարվա ընթացքում
11	Նախաձեռնել լրացումներ և փոփոխություններ Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքում	Օրենսդրությամբ սահմանված պահանջների նկատմամբ ջրային ռեսուրսների օգտագործման, պահպանության և հաշվառման կանոնների վերահսկողության բարելավում:	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն, Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	2021 թվականի 2-րդ եռամսյակ

12	Նախաձեռնել լրացումներ և փոփոխություններ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	Օրենսդրությամբ սահմանված պահանջների նկատմամբ մթնոլորտային օդի պահպանության և հաշվառման կանոնների վերահսկողության բարելավում:	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն, Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	2021 թվականի 2-րդ եռամսյակ
13	Նախաձեռնել լրացումներ և փոփոխություններ «Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը հաստատելու մասին» 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2410 Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումում	Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների հստակեցում և վերահսկողության բարելավում:	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն, Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	2021 թվականի 2-րդ եռամսյակ
14	Նախաձեռնել լրացումներ և փոփոխություններ Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում	Քրեական և քաղաքացիական օրենսգրքերի միջև առկա հակասությունների հստակեցում՝ վնասի հատուցման և գանձման վերաբերյալ:	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն, Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	2021 թվականի 2-րդ եռամսյակ

15	Նախաձեռնել լրացումներ և փոփոխություններ «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	Կենդանական աշխարհի զանգվածային ոչնչացման եղանակներով որս իրականացնելու դեպքերի հետևանքով պատճառված վնասի և բնությանը պատճառված վնասի հատուցման ճշգրիտ չափի հաշվարկման հստակեցում:	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն, Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Տարածքային ստորաբաժանումներ	2021 թվականի 2-րդ եռամսյակ
16	«ՊԱՀՊԱՆԻՐ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ» ծրագրի իրականացում	Սևանա լճի և ջրհավաք ավազանի խնդիրների բացահայտում և նպաստել տեսչական մարմնի ընդհանուր կարողությունների զարգացում:	Խորհրդական՝ ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն	2021 թվականի 3-րդ եռամսյակ
17	«Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկոս» համակարգով» ծրագրի իրականացում	Անտառների ապօրինի հատումների կանխարգելում, ձկնագողությունը և որսագողությունը, շրջակա միջավայրի աղտոտուման նվազեցում:	Խորհրդական՝ ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն	2021 թվականի 3-րդ եռամսյակ
18	Պարտադիր կատարման պայմանների փոփոխում՝ թույլտվությունների, լիցենզիաների, կնքվող	Լիազոր մարմինների կողմից պարտադիր կատարման պայմանների փոփոխումը կբարելավվի բնական ռեսուսների օգտագործման,	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն	Ոլորտային վերահսկողություն իրականացնող վարչություններ և	2021 թվականի 2-րդ եռամսյակ

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

	պայմանագրերի պայմանների տրամադրման գործընթացում	ժամկետների պահպանման նկատմամբ հսկողական գործառույթների իրականացումը		տարածքային ստորաբաժանումներ	
--	---	---	--	-----------------------------	--

ԾՐԱԳԻՐ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ

N	Միջոցառման անվանումը	Արդյունք	Ժամկետ	Կատարող/համակատարող
1	2	3	4	5
1	<p>Մամուլի հաղորդագրությունների պատրաստում և տարածում. Թեմաներ՝</p> <ul style="list-style-type: none"> -Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ: -Մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության, վտանգավոր նյութերի արտադրության և սպառման, թափոնների հաշվառման կանոնների օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման և/կամ չկատարման վերաբերյալ: -Շրջակա միջավայրին հասցված վնասակար ազդեցության և պատասխանատվության վերաբերյալ: 	<p>Տեսչական մարմնի գործունեության սկզբունքների ապահովում՝ համաձայն Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում: Հնարավոր խախտումների կանխարգելում, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում:</p>	<p>Յուրաքանչյուր ամիս նվազագույնը 2 հաղորդագրություն:</p>	<p>Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին: Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն: Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն:</p>
2	<p>Տեսչական մարմնի ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց հետ մամուլի ասուլիսների և/կամ հարցազրույցների</p>	<p>Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հասարակության տեղեկացվածության</p>	<p>Յուրաքանչյուր եռամսյակ 2 միջոցառում:</p>	<p>Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:</p>

	և/կամ ճեպագրույցների կազմակերպում և անցկացում:	բարձրացում, թափանցիկության ապահովում:		
3	Իրազեկում-հանդիպումներ Երևանում և ՀՀ մարզերում՝ բնապահպանության և ընդերքի ոլորտներում օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ:	Տնտեսվարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների և պարտականությունների մասին:	Յուրաքանչյուր կիսամյակ 6 հանդիպում (Տարվա ընթացքում Երևան՝ 2, ՀՀ մարզեր՝ 1-ական):	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին: Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն: Ընդերքի վերահսկողության վարչություն Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վարչություն: Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն
4	Հասարակական կազմակերպությունների, որսորդական միավորումների, բնապահպանների և արշավականների հետ հանդիպումներ:	Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում, հասարակության ոլորտային իրազեկվածության բարձրացում, հնարավոր խախտումների կանխարգելում:	Յուրաքանչյուր կիսամյակ 1 հանդիպում	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին: Ընդերքի վերահսկողության վարչություն: Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վարչություն: Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն: Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն:

5	<p>Խորհրդատվական նյութերի և/կամ բուկլետների ձևավորում և տարածում, այդ թվում բնապահպանության և ընդերքի ոլորտներում նոր ընդունվող ՀՀ օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ:</p>	<p>Տնտեսավարող սուբյեկտներին, քաղաքացիներին, հասարակական միավորումներին համապատասխան տեղեկատվության ապահովում, իրենց իրավունքների և պարտականությունների մասին խորհրդատվության տրամադրում:</p>	<p>Եռամսյակը 1 անգամ</p>	<p>Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին: Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն: Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն:</p>
6	<p>Վարչական վարույթների, դիմում-բողոքների, ահազանգերի, հարցումների վիճակագրության վարում, ամփոփում, հրապարակում:</p>	<p>Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում՝ առկա խնդիրների բացահայտում:</p>	<p>Յուրաքանչյուր կիսամյակի ամփոփումից հետո 15 օրվա ընթացքում</p>	<p>Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն: Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն: Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:</p>
7	<p>Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի կատարելագործում և տեխնիկական վերազինում:</p>	<p>Անհատականացման և ճանաչելիության խթանում հանրության շրջանակում:</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:</p>

8	<p>Տեսչական մարմնի՝ -թեժ գծի սպասարկում, -սոցիալական ցանցերում պաշտոնական էջերի տեղեկատվական սպասարկում -պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկում:</p>	<p>Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում, տեղեկատվության հասանելիություն: Արագ արձագանքման և հետադարձ կապի ապահովում:</p>	<p>Տարվա ընթացքում</p>	<p>Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:</p>
---	--	---	------------------------	--